«ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ (IV փուլ) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային տարածքը: (ՀՀ Լոռու մարզի Ալավերդի, Ճոճկան, Հաղպատ, Մեծ Այրում, Նեղոց, ՀՀ Տավուշի Այրում համայնքները)

Հանդիպան վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի (քաղաքապետարան)

Ամսաթիվ՝ 5 մայիս, 2017 թ., ժամը 14:00

Հանդիպման նպատակն էր, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող «էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի ներքո «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը» շահառու և ազդակիր հանրությանը տեղեկացումը և հանրային քննարկումների կազմակերպումը:
Հանդիպման մասնակիցների ցանկը ներկայացված է Հավելված 1-ում:

Օրակարգ

Նիստը բացեց Ալավերդու քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի մասնագետ Զավեն Շահմուրադյանը: Նա ողջունեց հանդիպման մասնակիցներին այնուհետև խոսքը փոխանցեց ՇՄԱԳ փորձաքննական կենտրոնի գլխավոր մասնագետ Կարինե Մովսիսյանին: Նա ներկայացրեց Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացքը:

Ալավերդու քաղաքապետարանի ներկայացուցիչը հնչեցրեց հետևյալ հարցը, «նախատեսվող գործունեությունը ինչ ազդեցություն կունենա հողի, ջրի և օդի վրա, ինչպես նաև ՕԳ-ի անվտանգության գոտին ուղահայաց և հորիզոնական հարթության մեջ»:

Հարցին պատասխանեց Վռամ Թևոսյանը - «հիմնական ազդեցությունը լինելու է շինարարության ընթացքում, որի ժամանակ հանվելու և տեղափոխվելու են հողային զանգվածներ և կառաջանան փոշու արտանետումներ: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով կհանվի հողի բերրի շերտը, կպահեստավորվի և հետագայում կօգտագործվի վերակուլտիվացման նպատակով»:

Նաև արտանետումները կլինեն դիզելային վառելիքի այրման արդյունքում», այնուհետև շարունակեց Մեսրոպ Մեսրոպյանը - «ՕԳ –ն անտառային տարածքով անցնելու դեպքում ունենալու է 7 մետր բարձրություն, որի խախտման դեպքում կառաջանա էտումների կարիք, սակայն հաշվի առնելով ծառատեսակները կարելի է ենթադրել, որ դրա կարիքը չի լինի: Հորզոնականը ուղությամբ անվտանգության գոտին կլինի 10մ»:

Այնուհետև հնչեցվեց հետրևյալ հարցը - «ինչպես է իրականացվելու հողերի օտարումը»:

Պատասխանեց Մ.Մեսպորյանը՝ «Հողերի օտարումը տեղի է ունենալու օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև բոլորի հետ իրականացվելու են անհատական աշխատանքներ»:

Կարինե Մովսիսյանին հուզում էր հետևյալ հարցը- «արդյոք Ախթալայի պոչանբարի սանիտարապաշտպանիչ գոտում հենասյուներ նախատեսված են թե ոչ»

Հարցին պատասխանեց Մեսրոպ Մեսրոպյանը - «տվյալ գոտում հենասյուներ չեն տեղադրվելու»

Ալավերդու քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի մասնագետ Զավեն Շահմուրադյանը:

Ալավերդու քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի մասնագետ Զավեն Շահմուրադյանը /վարող/

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 1-ին բաժնի էլեկտրամատակարարման հուսալիության վարկային ծրագրերի բաժնի պետի տեղակալ՝ Հայկ Հովհաննիսյան

Կապալառուի՝ ենթակապալառու «Ռեդինետ» ՓԲԸ ընկերության ներկայացուցիչ՝ Մեսրոպ Մեսրոպյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ բնապահպան՝ Հասմիկ Խաչոյան /Արձանագրող/